ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 28

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.12.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով Դեղձուտ համայնքի ավագանին

որոշում է՝

հաստատել Արարատի մարզի Դեղձուտ համայնքի ավագանու 12.12.2016թվականի թիվ 12 հերթական նիստի օրակարգը՝

1. ,,Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,,-հարցը: / զեկուցող՝ Կատյա Գիշյան/
2. ,, Արարատի մարզի Դեղձուտ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքնակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը 2017թվականի համարհաստատելու մասին ,, - հարցը: / զեկուցող՝ Անժելինա Հովհաննիսյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ - Կողմ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ - Կողմ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ - Կողմ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ - Կողմ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ - Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30-Ն

2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով ավագանին

որոշում է՝

Հաստատել 2017թվականի համար Դեղձուտ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ տեսքով.

Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը -175000դրամ,
Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը -8,
Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1.Համայնքի ղեկավարի տեղակալ	1		-120000դրամ
2.Աշխատակազմի քարտուղար	1	/1.2-1/	-125000դրամ
3.Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	/2.3-1/	-124000դրամ
4.Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	/3.1-1/	-122000դրամ
5.Մշակույթի տան տնօրեն	1		-73000դրամ
6.Գրադարանավար	1		-73000դրամ
7.Օպերատոր	1		-118000դրամ
8.Հավաքարար	1		-73000դրամ

Կողմ -3 ԴԵՄ-1 ՁԵՌՆՊԱՀ -1

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ -Կողմ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ- Կողմ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ -Կողմ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ -Ձեռնպահ
5.ԿԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ -Դեմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջներով ավագանին

որոշում է՝

Դեղձուտ համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5.000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20.000դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 .000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50. 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2.500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝1.500դր
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2.000դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուրեռամսյակիհամար՝
ա.մինչև 26 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնականշինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2.000 դրամ,
բ.26 –ից մինչև 50 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.000դրամ,
գ. 51 –իցմինչև 100 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000դրամ,
դ.101 –իցմինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.000դրամ,
ե.201 –իցմինչև 500 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000դրամ,
զ.501 կավելի քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վ առքի կազմակերպմանդեպքում՝ 30.000դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի հանար՝
ա.մինչև26 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2.000դրամ,
բ. 26 –ից մինչև 50 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.000դրամ,
գ 51 –ից մինչև 100 քառակուսի մետր մակերես

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000դրամ,
դ. 101 –ից մինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.000դրամ,
ե. 201 –ից մինչև 500 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30.000դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար. 10դրամ

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 .000դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 2.000դրամ

բ. 26–ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 4.000 դրամ

գ.51 –ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 5.000 դրամ,

դ. 101 –ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 8.000 դրամ,

ե. 201–ից մինչև 500 քառակուսի ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 15.000դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 25.000դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝
500դրամ

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար
դրամ 1.000

գ. 51 –ից մինչև100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝
2.000դրամ

դ.101–ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝
4.000

դրամ
ե. 201 –ից մինչև 500 քառակուսի ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 6.000դրամ
զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի բյեկտների համար՝
10.000դրամ

<<գա>> ենթակետի յուրաքանչյուր կետով սահմանված դրույքաչափերի ստորին սահմանները չեն կարող պակաս լինել այդ կետերին նախորդող դրույքաչափերի վերին սահմաններից:

5^1 . Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50.000 դրամ

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000դրամ
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500.000դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000դրամ:

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.000դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.500դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500դրամ.
դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3.000դրամ.
ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:
8.1 Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ վահանակների 1 քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,
8.2 Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիր ը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տրամադրելո ւթույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 .000դրամ:
Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում 50.000դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 4000դրամ
10.1 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 250.000դրամ:
10.2 ա. 3հա-ից մինչև 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար 1.200.000դրամ,
բ. 5հա-ից մինչև 7հա մակերեսունեցող գերեզմանատների համար 2.500.000դրամ
գ. 7հա-ից մինչև 10հա մակերեսունեցող գերեզմանատների համար 3.500.000դրամ
դ.10հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար 5.000.000դրամ

Տեղական վճարների դրույքաչափերի սահմանում

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1.000դրամ

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1.000դրամ

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 1.000դրամ

14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար չգանձել:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ - Կողմ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ - Կողմ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ - Կողմ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ - Կողմ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ - Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ